

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ

ՀՀ Շիրակի մարզպետարանը ներքին աուդիտի ոլորտում՝ 2015 թվականին, համաձայն հաստատված տարեկան ծրագրի, իրականացրել է մարզպետարանի ենթակայությամբ գործող թվով 4 պետական ոչ առևտրային կազմակերպություններում կատարված գնումների գործընթացի գնահատման աուդիտ: Թվով 35 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, 5 փակ բաժնետիրական ընկերություններում և 5 սոցիալական ծառայության տարածքային գործակալություններում իրականացվել է համակարգի գնահատման աուդիտ: Իրականացրած աուդիտների վերաբերյալ կազմվել են աուդիտորական հաշվետվություններ: Աուդիտորական հաշվետվությունների հիման վրա տրվել են գրավոր հանձնարարականներ աուդիտի ընթացքում հայտնաբերված թերությունների և բացթողումների վերացման վերաբերյալ:

ՀՀ Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի
բաժնի պետ Մ. Բզնունի